31.03.2022թ.
349-83

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2022 թվականի մարտի 28-ին ուղարկված տեղեկություն ստանալու թիվ 349-79 հարցման՝ Քաղաքապետարանը մարտի 30-ին ուղարկել է պատասխան գրություն, որում նշված է, որ «… **հիշյալ հողամասի նկատմամբ առկա չէ պետական գրանցում, որտեղ պետք է նշված լինի հողամասի նպատակային նշանակությունը**»: Տեղեկացնենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնում առկա է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք այն մասին, որ «**01-001-0450-0018 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը, ըստ 2009թ. 1517-Ն որոշման՝ բնակավայրերի է, իսկ գործառնականը՝ բնակելի կառուցապատում**» (Կադաստրի կոմիտեի տեղեկանքն ու տարածքի հատակագիծը՝ կից)։

ԻՆչպես նաև նշենք, որ Քաղաքապետարանի կողմից տրամադրված պատասխան գրության մեջ անդրադարձ չկա հարցման 4-րդ հարցին։ Ուստի ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տեղեկացնել, թե, հաշվի առնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը՝ ինչ միջոցառումներ է ներկայումս ձեռնարկում Երևանի քաղաքապետարանը այս ապօրինի հողօգտագործումը կասեցնելու ուղղությամբ։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am